I

ԱԴԱՆԱՅԻ 1909 Թ. ԿՈՏՈՐԱԾԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Երիտթուրքական կուսակցության կեղծ ազատամտությունը, նրա հռչակած ազատության, եղբայրության ու հավասարության կարգախոսները գործնականում պետք է մերկացվեին հենց իրենց՝ երիտթուրքերի կողմից և որի անհերքելի վկայությունը եղավ ադանահայերի կոտորածը 1909 թ. ապրիլին: Ճանաչողական տեսակետից կարևոր նշանակություն ունի կոտորածի և դրան անմիջապես հետևող ժամանակաշրջանի արևմտահայ մամուլի նյութերի վերհանումը. այն ցույց է տալիս արևմտահայ հանրության վերաբերմունքը նշված ողբերգության նկատմամբ, հասարակական կարծիքի ապրած տեղաշարժերը, չեզոք մամուլի և կուսակցությունների վերաբերմունքը Թուրքիայում զարգացող քաղաքական իրադրության հանդեպ և, ի վերջո, բեկումնային այն շրջանը, որի ընթացքում արևմտահայության մի ստվար մասի համար պարզ էր դառնում, որ երիտթուրքական կառավարությունը սկսում է այնտեղից, որտեղ վերջացրել էր Աբդուլ Համիդը՝ ջարդերի և ավերի նույն ավանդական քաղաքականությամբ:

Ադանայի կոտորածի լուրը, առավել ևս՝ դրա հանգամանքների մասին տվյալները պոլսահայ մամուլը հիմնականում ստացավ բավական ուշ՝ ապրիլի վերջին-մայիսին: Սեփական լրատվության բացակայության կամ անլիարժեքության պայմաններում թերթերին հասնում էին կցկտուր լուրեր և հակասական մեկնաբանություններ, և դա հասկանալի է դառնում իրադարձությունների բերումով երկրից մեկուսացած Ադանայից ու դրան կից շրջաններից ճիշտ լրատվություն ստանալու դժվարության առումով: Այս պայմաններում հայ մամուլը մի հայտնի չափով պետք է բավարարվեր թուրքական իշխանությունների կողմից տարածած ապատեղեկատվությամբ, ըստ որի Ադանայի կոտորածը Աբդուլ Համիդի և նրա դեռևս պաշտոնավարող համախոհների կազմակերպած գործն է, որոնք ոտքի էին ելել կոտորածների, երկրում խառնակություններ ստեղծելու միջոցով հին ռեժիմը վերահաստատելու համար: Երիտթուրքական մամուլը շտապեց կատարել կառավարողների քաղաքական պատվերը: Այսպես, «Սաբահ» թերթը գրում էր, թե Ադանայում «հետադիմական շարժումը» գլուխ է բարձրացրել 1908 թ. հուլիսի 11-ի հեղափոխության (երիտթուրքական հեղաշրջման) թույլ տված թերության հետևանքով, այսինքն՝ մայրաքաղաքում հետադիմությունը ջախջախվել էր, «բայց գավառներու մեջ գոյություն ունի տակավին»[1]: Այս կեղծիքը և՛ երկրի ներսում, և՛ արտասահմանում ջանախնդրորեն տարածում էին երիտթուրքական պաշտոնական ու անպաշտոն բազմաթիվ մարմիններ:

---

[1] *Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, 8 մայիսի:*

Երիտթուրքական խայծին վրա պրծավ նաև եվրոպական մամուլը: «Կուրիեր դ'Իտալիա» թերթը նույնիսկ գրում էր, որ Ադանայի ջարդերը սուլթանից հեռագրով են հրահանգավորվել, բերվում էր նույնիսկ հեռագրի տեքստը՝ «Սպանեցե՛ք բոլոր հայերը, ինչպես նաև բոլոր սահմանադրականները»[2]: Հոդվածը, որ ակնհայտորեն գրվել էր իթթիհադի պատվերով, բացահայտում էր նաև, որ այդ կուսակցությունը հետամտում է իր գործած չարիքից քաղաքական կապիտալ շահել՝ գերազանցելով Աբդուլ Համիդին: Նույն հոդվածում հայտնվում էր նաև, թե, իբր, Համիդը ջարդերի հրահանգ պարունակող գրություններ է հղել նաև երկրի այլ շրջաններ, սակայն «սահմանադրական (իմա՛ երիտթուրքական) վալիները ուժգնապես մերժած ըլլալով հնազանդիլ»՝ հնարավոր է եղել ջարդերի առաջն առնել[3]:

Այս մթնոլորտում հայ ազգային բոլոր կուսակցությունները և նրանց հրատարակությունները, ինչպես և չեզոք մամուլը՝ «Բյուզանդիոնը», «Ժամանակը», «Արևելքը», «Հայրենիքը», «Մանգումեի էֆքյարը» և այլն, Ադանայի կոտորածը համարեցին հետադիմական շարժման արդյունք: Նույն կարծիքին էր նաև Պոլսի հայ ազգային երեսփոխանական ժողովը, որը մայիսին օսմանյան խորհրդարանի և բանակի հրամանատարությանն ուղղած իր հուշագրում նս ամեն ինչ բարդում էր Համիդի վրա: Հետագա իրադարձություններն ու լրատվական միջանցքի լայնացումը հայ մամուլի համար աստիճանաբար պետք է պարզեին իրողությունը: Թերթերում լայն քննարկման առարկա են դառնում կոտորածի հանգամանքները, դրան նախորդող քաղաքական իրադրությունը, թուրքերի և հայերի փոխհարաբերությունները, ընդհարումներն այդ շրջանում և այլն: Ճշմարտություն է այն, որ երիտթուրքական իշխանությունների ու նրանց մամուլի քարոզչության աներևակայելի կեղծիքները Ադանայի կոտորածի վերաբերյալ՝ քիչ բանով չնպաստեցին հայկական մամուլին հասկանալու, որ հենց երիտթուրքերն են սպանդի կազմակերպիչները: Այսպես, նույն «Սաբահ» թերթը բերում էր ջարդի բացահայտորեն կեղծ վիճակագրական տվյալներ, հայտնելով, թե Ադանայում զոհվել է 1924 և վիրավորվել 533 իսլամ, մինչդեռ հայերը տվել են 1455 զոհ և 382 վիրավոր: «Բյուզանդիոնը» հերքում է այս տվյալները, նշելով, որ Ադանայում հայերի կորուստները կազմում են 20–30 հազար մարդ[4]:

«Մանգումեի էֆքյարը», իր հերթին, կասկած էր հայտնում հին ռեժիմի մարդկանց կազմակերպչական դերի մասին, նկատելով, որ այդ դեպքում գործող իշխանությունների կողմից Կիլիկիայի հայերին հալածելու, նրանց խռովությունների մեջ հանիրավի մեղադրելու քարոզչությունը ինչպես կարելի է հաշտեցնել նրանց հայտարարությունների անկեղծության ու ճշմարտության հետ[5]: Զմյուռնիայի «Արևելյան մամուլ» շաբաթաթերթը հիշյալ պաշտոնական վարկածը հերքելով՝ վկայակոչում էր օսմանյան խորհրդարանի և կառավարության առնվազն տարօրինակ լռությունը ջարդերի հարցում, նկատելով նաև, որ դեպքերի առթիվ ներքին գործերի նախարարը տվել է միայն «անհեթեթ ու

---

[2] *«Մանգումեի էֆքյար», 1909, 27 մայիսի:*

[3] *Նույն տեղում:*

[4] *«Բյուզանդիոն», 1909, 10 մայիսի:*

[5] *«Մանգումեի էֆքյար», 27 մայիսի:*

կցկտուր բացատրություններ»[6]: Շաբաթաթերթը Ադանայի նախկին կառավարչին համարում է ջարդերի կազմակերպիչ, որի գործողությունները հայերի դեմ մշակվել են նախապես և բացահայտորեն, ու չնայած դրան, «Օսմանյան խորհրդարանը կվարանի այդ սրիկան հանցավոր նկատելու, և դատի ենթարկելու»[7]: Ի դեպ, արևմտահայ թերթերի մեջ «Արևելյան մամուլը» աչքի է ընկնում իրադարձություններին շտապ արձագանքելու և լավատեղյակ լինելու իր կարողությամբ: Դեռևս ապրիլին նա տպագրել է Մերսինի և Ալեքսանդրեթի օտարերկրյա տերությունների (որ չի նշում հասկանալի պատճառներով) երկու փոխհյուպատոսների տեղեկագրերը կոտորածների վերաբերյալ՝ հավաստի տվյալներով: Այստեղ նկարագրվում են ապրիլի 1-ից 4-ը Ադանայի և Տարսուսի արյունալի դեպքերը: Բազմաթիվ հայերի հետ, ըստ Մերսինի փոխհյուպատոսի, այս քաղաքներում կոտորվել են նաև 500 հույն: Նա հայտնում է, որ ջարդերը շարունակվել են այնքան ժամանակ, մինչև նավահանգիստ են մտել գերմանական, ֆրանսիական և անգլիական ռազմանավերը: Նրանց տեսքը ջարդարարներին կասեցնում է մի քանի օր, բայց ապրիլի 12-ին «Մելանիկե հասած 2.000-ի չափ զորքերը (թուրքական – Ա. Խ.), որոնք իբրև թե պիտի պահպանեին հանդարտությունը, կհարձակին հայոց թաղին վրա նույն կատաղությամբ… հրդեհելով և թալանելով»[8]:

Ալեքսանդրեթի փոխհյուպատոսի տեղեկագրում ևս կարևոր տեղեկություններ են պարունակվում դեպքերի մասին: Դյորթ Յոլի (Չոք Մարզվանի) գյուղերում ապրող 5.000 հայերը պաշարված էին 15.000 քրդերով և հարյուրավոր չերքեզներով, նրանց էին միացել Բայասի բանտից ազատ արձակված թուրք քրեական հանցագործները: Իսկ եվրոպական ռազմանավերը, որոնք եկել էին պաշտպանելու իրենց հայրենակիցներին, ոչինչ չեն արել պաշարվածներին օգնելու համար, քանի որ, ըստ փոխհյուպատոսի, նրանք հրաման չունեին ոչ զորք ափ հանելու, և ոչ էլ շրջակաները պահպանելու[9]: Մայիսի վերջերին, «Բյուզանդիոնը» հեգնում էր եվրոպական տերությունների «չմիջամտելու» այս կեցվածքը, նկատելով, որ նրանք իրենց ռազմանավերին հրամայել էին «զորք ցամաք չհանվի բնավ, բայց կարելի եղածին չափ պաշտպանվին քրիստոնյաները, օ, հեգնություն»[10]:

Ապրիլի վերջերին և մայիսին «Բյուզանդիոնն» իր ողջ ուշադրությունը կենտրոնացնում է ողբերգության, դրա մանրամասների և իրողությունների ոչ միայն նկարագրության, այլև վերլուծության վրա: Թերթը տպագրում է նամակներ, թղթակցություններ, հոդվածներ, բաց անելով հատուկ խորագիր՝ «Կիլիկիո դեպքերը» վերտառությամբ: Հայ մտավորականության մի ստվար մասը, այդ թվում և «Բյուզանդիոնի» գործիչներն ապրում էին երիտթուրքերից ունեցած ակնկալիքների ճգնաժամից և հիասթափություններից ծնվող խորը դրամա, նրանց համար

---

[6] *«Արևելյան մամուլ», 1909, -18, էջ 510:*

[7] *Նույն տեղում, էջ 511:*

[8] *Նույն տեղում, էջ 520:*

[9] *Նույն տեղում, էջ 522: Ի վերջո, Դյորթ Յոլում կուտակվել էին «շրջակայքի հայ գյուղերից փախած ավելի քան 11.000 հոգի», որոնք միանալով դյորթյոլցիներին՝ մարտնչեցին ջարդարարների դեմ (տե՛ս Հ. Ս ի մ ո ն յ ա ն. Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում, Երևան, 2009, էջ 128):*

[10] *«Բյուզանդիոն», 1909, 31 մայիսի:*

անսպասելիորեն պարզվելու էին երիտթուրքական ջարդարարական ծրագրերը գործողության մեջ: Թերթը հանգամանորեն անդրադարձել է թուրքական խուժանի գործելակերպին, խաղաղ բնակչության հանդեպ նրանց գործած վայրագություններին: «Բյուզանդիոնը» վերհանել է նաև հայերի դիմադրությունն ու պաշտպանական կռիվները: Հատկապես լուսաբանվել է Հասանբեկ հայկական գյուղի երկօրյա դիմադրությունը ջարդարարների բազմապատիկ ուժերին: Թերթը տպագրել է այդ գյուղացի մի հայի նամակը իր եղբորը, որտեղ անմիջական պատկերներով նկարագրվում է գյուղացիների հուսահատական դիմադրությունը: Նույն խորագրի ներքո ներկայացվում են Չոք Մարզվանի հայերի պաշտպանական կռիվները: Չոք Մարզվանի կացությանը նվիրված հոդվածին հետևում է Ադանայի ջարդերը վերապրածների ծայրաստիճան թշվառ վիճակը ցուցադրող ակնարկը[11]:

Ջարդերին զուգահեռ՝ ամբողջ թափով սկսել էր գործել իթթիհատական քարոզչությունը:

Վիճակագրական հորինածո տվյալները թուրքերն ամրապնդում էին համապատասխան պատժիչ գործողություններով: Եվ ինչպես ընդունված էր ժամանակի Թուրքիայում՝ ջարդերի ամբողջ պատասխանատվությունն ու մեղքը ջարդարարները պետք է գցեին զոհերի վրա: Կիլիկիայում սկսվեցին հայերի հոծախումբ ձերբակալությունները, ամբողջ թափով սկսեց գործել թուրքական «արդարադատության մեքենան»: Թուրքական մամուլը միահամուռ, սոսկ երանգային տարբերություններով էր ներկայացնում իրականի ձախուծուռ պատկերը: Նախապես այդ մամուլը, ինչպես ասվեց, հասարակական կարծիքի ուշադրությունն ուղղեց դեպի հին վարչակարգի՝ Աբդուլ Համիդի ու նրա համախոհների և գործակալների կողմը: Այսպես, «Սաբահը» պնդում էր, որ գավառներում տակավին կենսունակ է հակահեղափոխությունը՝ արյունալի իրադարձությունների կազմակերպիչը: Ճիշտ այս ոգով լուրերը սկսեց մեկնաբանել օսմանյան երեսփոխանական ժողովը, որը գրեթե միաբերան դեպքերի մեղավոր էր համարում իշխանությունից հեռացված Համիդին: Նույնն էր հանկերգում Սալոնիկի երիտթուրքական «Նիյրի հազբգաթ» («Ճշմարտության օրրան») թերթը, ինչպես և Էրյուզիա Թևֆիկի՝ «Թասվիր-ի էֆքյար»-ը («Մտքերի արտացոլում»): Վերջինս պնդում էր, որ Ադանայի դեպքերի համար երկու կողմերն էլ հավասարապես հանցավոր էին: Կողմերի այս կեղծ հավասարակշռության թեզն արդեն նախապատրաստական քայլն էր, որից քիչ այն կողմ սկսվելու էր այդ հավասարակշռության նժարն ամբողջովին ի վնաս հայերի թեքելու գործը: Թուրքական լրատվամիջոցների հարայհրոցների ուղեկցությամբ Կիլիկիայում սկսվեցին, իբր, ապստամբ և նախահարձակ հայերի ձերբակալությունները: «Շատ մը հայեր կան ձերբակալված Ատանայի, Մերսինի մեջ և այլուր,– գրում է «Բյուզանդիոնը», – իբր թե, Կիլիկիո մեջ հեղափոխություն հարուցած ըլլալու կամ իսլամաց վրա հարձակելու ամբաստանությամբ: Ակներև է, որ տեղական պաշտոնեությունն իր բացարձակ կողմնակցությունն ու մեղսակցությունն հերքելու կարծիքով տխուր եղելությանց պատասխանատվությունն հայոց վրա կնետե և Մերսինի «Իթիդալ» («Չափավորություն» – Ա. Խ.) թերթն ալ շարունակ հայերը կամբաստանե, իբր թե անոնք են

[11] *Նույն տեղում, 10 մայիսի:*

սկսեր ջարդը, անոնք կրակ ըրեր են թրքաց կալվածները, անոնք կրակ ըրեր են զորաց վրա»[12]: «Կիլիկյան արհավիրքը» հոդվածում Ս. Պարթևյանը մերկացնում էր թուրքերի քաղաքական երեսպաշտությունը՝ հայերին մեղադրելու «իբրև ապստամբ ու անհատական ձգտումներու գործիքն ու արտահայտիչը»[13]: Հոդվածագիրը հավելում էր, որ «Ատանայի «Իթիտալ» թերթին մեջ Իհսան Ֆիքրի ամենախուժդուժ լեզվով մը կամբաստանե հայերն իբրև նախահարձակներ կոտորածի ու հրդեհի»: «Ատանայի աղետին առթիվ նոր զրպարտություններ» հոդվածում «Բյուզանդիոնը» մերկացնում է Ադանայի մուֆտի Մեհմեդ Լուֆթիի մի թղթակցությունը Զմյուռնիայի «Խըդմեթ» («Ծառայություն») թերթում, որտեղ ջարդերն ու անկարգությունները համարում էր հայերի ձեռքի գործը[14]: Մուֆթիի այս թղթակցությանը ընթերցողին ծանոթացնելուց հետո «Բյուզանդիոնը» տալիս է իր անվրեպ եզրակացությունը. «Մուֆթիին այս գիրին ամփոփումը ներկայացուցինք, հաստատելու համար, որ այս ջարդն ու աղետը պատահական բան մը չէր, այլ նախապատրաստված ծրագրի մը վրա քալեր է ու հետո իրենց փաստերն ալ պատրաստեր են ինքզինքին արդարացնելու համար»[15]: Մեկ այլ հոդվածում արդեն թերթը հայտնում է, որ Կիլիկիայում ջարդերն իրականացվել են կանխամտածված ծրագրով, իսկ դրա գործադրման մեջ մեծ բաժին է ունեցել կուսակալ Զեվադ բեյը. ջարդի առաջին փուլից հետո (ապրիլի 1–3) իշխանությունները հայերից հավաքել էին զենքը, իսկ ապրիլի 13-ին, ջարդի 2-րդ փուլում, արյունահեղությունը սկսվեց երիտթուրքական բանակի ստորաբաժանումների հարձակումով, որին միացավ մշտապես պատրաստի խուժանը[16]: 1909 թ. հունիսին թերթը հերքում է երիտթուրքերի ապալրատվությունն այն մասին, որ Ադանայի աղետի պատասխանատուներն Աբդուլ Համիդի կողմնակիցներն են[17]:

Մայիս–հունիս ամիսներին երիտթուրքական քարոզչական մեքենայի կեղծիքներին միացան Ադանայում այս ժամանակներում իրենց գործունեությունը սկսած ռազմական ատյանները: Ե՛վ քարոզչությունը, և՛ «արդարադատությունը» գործում էին միևնույն երիտթուրքական կենտրոնից տրված հրահանգներով՝ համաձայնեցնելով իրենց գործողությունները: Ռազմական ատյանի վճռով Ադանայում մահվան դատապարտվեցին 9 թուրք և 6 հայ՝ իբրև խռովությունների անմիջական մասնակիցներ: Ակներև էր, որ դատարանը ճգնում էր «հավասարակշռություն» ստեղծել կողմերի միջև՝ պատժելով և՛ մեկի, և՛ մյուսի ներկայացուցիչներին: Պոլսի հայ մամուլը բողոքի ձայն բարձրացրեց հայերին հանիրավի դատապարտելու և պատժելու համար: Ինչպես վկայում էր Տարսուսի ամերիկյան քոլեջի տնօրեն Թ. Քրիստին «Հայրենիք» թերթում, կախված հայերից երեքը նույնիսկ չէին էլ մասնակցել ինքնապաշտպանական որևէ գործողության. «կոտորածի ատեն, – վկայում է

[12] *Նույն տեղում, 8 մայիսի:*
[13] *Նույն տեղում, 10 մայիսի:*
[14] *Նույն տեղում, 26 մայիսի:*
[15] *Նույն տեղում:*
[16] *Նույն տեղում, 2 հունիսի:*
[17] *Նույն տեղում, 3 հունիսի:*

նա,– մեր դպրոցը ապաստանած էին»[18]: Վկայակոչելով իտալական մամուլը, «Ազատամարտը» ևս գրում էր, որ կախված հայերի մեծ մասը ճանաչված և հարգված մարդիկ էին Ադանայում, անմեղ անձնավորություններ, որոնք կախվել էին թուրք թալանչիների և մարդասպանների կողքին[19]: Պետք է եզրակացնել, որ թուրքական դատարանի համար կարևոր էր եղել ոչ թե անձի արարքը, այլ նրա ազգությունը՝ նույն «հավասարակշռությունը» ապահովելու իմաստով:

Մայիս ամսին նկատելի է թուրքական քարոզչության եռանդը՝ հայերին նաև այլ հանգամանքներում մեղավոր ճանաչելու հարցում. բացի սկզբնապատճառ լինելուց, այս անգամ նրանք մեղավոր էին համարվում կատարված բոլոր իրողությունների մեջ: Իշխանությունները սկսեցին աջ ու ձախ ձերբակալել և բանտերը լցնել հայերով: «Բյուզանդիոնն» այդ մասին գրում է. «Շատ մը հայեր կան ձերբակալված Ադանայի, Մերսինի մեջ և այլուր, իբր թե Կիլիկիո մեջ հեղափոխություն հարուցած ըլլալու կամ իսլամաց վրա հարձակելու ամբաստանությամբ»[20]: Մայիսի 27-ին «Մանգումե էֆքյարի» թղթակիցը հայտնում էր, որ Ադանայում արդեն բանտարկվել է 150 մարդ՝ ապօրինի զենք պահելու մեղադրանքով: Ընդսմին, թերթը հայտնում էր, որ ձերբակալվել են այն հայերը, որոնք դիմել են ինքնապաշտպանության՝ իրենց տների վրա արված հարձակումները հետ մղելու համար, մինչդեռ հարձակվողներին ու ջարդարարներին «բան մը չեն ըներ»:

Դատարանները այնուհետև, սկսեցին կոնկրետացնել իշխանությունների ընդհանուր մեղադրանքները հայերի դեմ: Նրանց մեղսակցությունը որոնում էին գաղտնի կոմիտեների, Կիլիկիան Թուրքիայից անջատելու և այդ նպատակով բացահայտորեն զինվելու մեջ: Իշխանությունները բռնի ստորագրություններ էին կորզում բանտարկյալ անմեղ հայերից, որտեղ նրանք «խոստովանում էին», որ իրենք են կոտորածների պատասխանատու[21]: Արտասահմանի թուրքական դեսպանատները ուռճացած լուրեր էին տարածում զինված հայերի ապստամբական նպատակների, նրանց նախապատրաստական միջոցների և թուրքերին կոտորելու դիտավորությունների մասին: Համընդհանուր այս արշավին սեփական գրգիռներն էր տալիս վերոհիշյալ «Իթիդալ» թերթը՝ հայերին մեղադրելով, որ նրանք «կրակ ըրեր են զորաց վրա», ամենևին չհիշելով, սակայն, զորքերի կատարած վայրագությունները հայ խաղաղ բնակչությ ան նկատմամբ: «Բյուզանդիոնը» ըստ հնարավորին հերքում էր այդ կեղծիքը[22]: Այս թերթում Ս. Պարթևյանը ուղղակի գրում էր, որ այս ամբաստանությունների հեղինակը իրենք՝ «ազատամիտներն» են (իմա՛ երիտթուրքերը):

---

[18] *«Հայրենիք», 1909, 9 օգոստոսի:*

[19] *«Ազատամարտ», 1909, 25 հուլիսի:*

[20] *«Բյուզանդիոն», 1909, 8 մայիսի:*

[21] *Մ ո ւ շ ե ղ ե պ ի ս կ ո պ ո ս. Ադանայի ջարդը և պատասխանատուները, Գահիրե, 1909, էջ 4:*

[22] *«Բյուզանդիոն», 1909, 8 մայիսի: «Իթիդալ» թերթը ոչ միայն հրահրում էր ջարդարարների վայրագ կրքերը, այլև ուղղորդում էր նրանց գործողությունները՝ իր խմբագիր Բիսան Ֆիքրիի սադրիչ հոդվածների համեմատ: «Հրազեն ու դաշույն ապահովաբար այնչափ ավեր չէին սփռած հոս, որչափ այդ մարդուն գրիչը»,– գրում է Արշակունի Թեոդիկը (Ա. Թ ե ո դ ի կ. Ամիս մը ի Կիլիկիա, Կ.Պոլիս, 1910, էջ 108):*

Երիտթուրքական քարոզարշավը, որը խնամքով նախապատրաստված ծրագրի տեսք էր ստացել արդեն մայիս-հունիս ամիսներին, իր հիմնական ուղղություններով արտացոլվել է Ադանայում գործող ռազմական մի ատյանի տեղեկագրում, որ թուրքական «Թանին» թերթից արտատպել է «Հայրենիքը»: Այստեղ Ադանայի հուզումների պատճառն է համարվում հայերի կողմից Կիլիկիան ապստամբության կենտրոնատեղի ընտրելը, որը բարենպաստ դիրք ուներ Եվրոպայից ակնկալվող օգնության համար: Հայերն են նախահարձակ եղել, ասված է այնտեղ, և նրանց եռանդը զսպվել է միայն զորքի ու տեղացի թուրք բնակիչների ուժերով: Թուրքական իշխանությունները մեղադրվում են ոչ թե սպանդը կազմակերպելու, այլ հայ ապստամբների նախապատրաստությունները ժամանակին չկանխելու համար: Տեղեկագրում հայերը ներկայացվում են իբրև զրպարտիչներ, որոնք դատարանին ամենուրեք բողոքում են անմեղ թուրքերի դեմ: Ի դեպ, այստեղ գործ ունենք թուրքական քարոզչության մի կարևոր առանձնահատկության՝ ամբոխի մեջ ցեղասպանության բարոյահոգեբանական հիմքերի նախապատրաստման հետ, որի ընթացքում նրա գիտակցության մեջ է մեխվում բարոյազուրկ մի ժողովրդի թշնամական կերպարը, որին ոչնչացնելը, անշուշտ, արդար գործ պետք է համարվի: Ադանայի կոտորածը ի հայտ էր բերում նաև այդ ամբոխի հատկանշական մի գիծը ևս՝ անմռունչ ու կատարյալ հնազանդությամբ ենթարկվել այն ամենին, ինչ թելադրվում էր այդ իշխանությունների կողմից: Վերը հիշված ամերիկյան քոլեջի տնօրենը հարցրել էր ջարդարարներին, թե ինչո՞ւ են կոտորում անմեղ մարդկանց, և սրանք պատասխանել էին «էմբր յուքարըդան գելդի» («հրամանը վերևից է եկել»)[23]:

Նույնը կարելի էր ասել նաև Ադանայի ռազմական ատյանի տեղեկագրի վերջնամասի վերաբերյալ, որը ակնհայտորեն հրահանգված էր երիտթուրքական բարձր իշխանավորների կողմից: Ատյանն առաջարկում էր կարճել 5–6 հարյուր թուրք ամբաստանյալների գործը, որոնք մեղադրվում էին դեպքերին մասնակցություն ունենալու մեջ: Դատարանն այդ պատճառաբանում էր այն բանով, որ բանտարկվելը «հայրենիքին ծառայող շատ առողջ մարդկանց «փճանալուն պատճառ պիտի ըլլա», և որ պետք է բավարարվել միայն մեծ հանցանքներ գործած ամբաստանյալների դատապարտմամբ:

Գրեթե նույն ծրագրով էր շարադրված Ադանա ուղարկված կառավարական հանձնաժողովի տեղեկագիրը, որտեղ տեղական իշխանությունները մեղադրվում էին անփութության ու անգործության մեջ, բայց և մյուս կողմից, թանձր գույներ էին ավելացվում միշտ ապստամբ և ծայրահեղությունների ընդունակ հայերի երևութական կերպարին: Կոտորածը կոծկելու ցայտուն օրինակ էր ցուցաբերել օսմանյան խորհրդարանի անդամ Քեմալ բեյը, որի կազմած տեղեկագիրը դեպքերի պատճառն էր համարում հայերի՝ «իրենց անցյալը սիրելը» և կողմերի անվստահությունը միմյանց հանդեպ, որն, իբր, «ահարկու թյուրիմացությանց արդյունք էր»[24]:

Դրան հակառակ, հայ մամուլը բազմաթիվ փաստերով, սեփական ու թարգմանական հոդվածներով, վավերագրերով և ականատեսների

---

[23] *«Հայրենիք», 1909, 6 օգոստոսի:*

[24] *Նույն տեղում, 9 օգոստոսի:*

վկայություններով ապացուցում էր, որ Ադանայի կոտորածը երիտթուրքական կառավարողների կանխամտածված ու կազմակերպած ծրագիրն է: «Հայրենիքը» մեջբերում է մի օտարերկրացի ականատեսի պատմածը և ընդգծում հայերի հանդեպ թուրք ջարդարարների ատելության պատճառը: «Հայոց հանցանքը,– գրում է նա,– իրենց աշխատասիրությունն ու հարստությունն է: Ատանայի երկրագործության, վաճառականության ու ճարտարարվեստի ձեռնարկներու հարյուրին ութսունհինգը հայոց ձեռքը կգտնվեր: Քսանյոթը տարի Կիլիկիա ապրած եմ, տեղական լեզուն ու բարքերը գիտեմ, և կտեսնեի ու կլսեի, թե մուսուլմանները, որոնք առհասարակ աղքատ են իրենց ծուլության հետևանքով, ինչպես ակռա կկրճտեին, կնախանշեին ու առիթ կփնտրեին այդ հարստությունը... ձեռք անցնելու»: Հայերի նյութական կորուստները նա հաշվում է 11 մլն ոսկու չափով, նրանք մնացել են օրվա հացի կարոտ, մինչդեռ շատերն այսօր հարստացել են Ադանայի մեջ: «Ու այդ պայքարը այդ հարստությունը ետ չի տալու մեջ կկայանա»[25], – եզրափակում է նա:

Անկողմնակալ երևալու կեղծ կեցվածքով մի պահ իշխանությունները փակեցին երտթուրքական «Իթիդալ» թերթը՝ հարմար գտնելով, որ անկարգություններ հրահրողի դեր կարելի է վերագրել կեղծիքների ու ստահակության չափն անցած այդ թերթին: Իրականում «Իթիդալը» անպատիժ մնաց՝ սոսկ ձևի համար փակվեց և վերահրատարակվեց իբրև օրաթերթ: Այդ կեղծիքը մերկացնում էր «Արևելյան մամուլի» աշխատակից Լ. Մկրտիչյանը. «Ատանայի և Մերսինի մեջ հայերով կլեցնեն բանտերը… «մարդ պիտի պատժենք», կըսեն, բայց մինչև ցայսօր հայերեն զատ ուրիշ մարդու պատժած չունին և «Երիտասարդ Թուրքիո օրգան «Իթիտալ» թերթը խափանեցինք», կըսեն, մինչ մեր ունեցած ամենաստույգ տեղեկությանց համեմատ, այդ թերթը, որ պարբերաբար կհրատարակվեր, օրաթերթի վերածված է հիմա»[26]:

Ադանայի կոտորածին Հայ հեղափոխական դաշնակցության ընդհանուր ռազմավարական դիրքերից մոտեցավ կուսակցության պաշտոնաթերթ «Ազատամարտը»: 1909 թ. ապրիլ–օգոստոսին թերթում նկատելի է զուգահեռ ընթացող երկու ուղեգիծ, նախ, Ադանայում թուրքական վայրագությունների իրական պատկերը փաստական հարուստ և բազմակողմանի տվյալներով, որոնք վկայում են տեղական իշխանությունների պատասխանատվությունը և մասնակցությունը ջարդերին, կառավարության կողմից զորքը հայերի դեմ հանելը և այլն[27]: Ուշագրավ է Ժիրայրի հոդվածը, որտեղ եզրակացվում է, որ Ադանայի անցքերը արատավորեցին նոր Թուրքիայի պատմությունը և սահմանադրական ամբողջ կարգը, ինչպես և երկիրը քաղաքակրթելու երիտթուրքական ծրագիրը: «Ազատամարտը» պարբերաբար նյութեր

---

[25] *Նույն տեղում, 1909, 6 օգոստոսի: Ադանայի ջարդերը երիտթուրքերի քաղաքական խարդավանքներով էին բացատրում թուրք հատուկենտ մտավորականները: Պատմագիր և գրող Մուրատ բեյը՝ «Միզան» («կշեռք») թերթի խմբագիրը, կարծում էր, որ ջարդերի ձեռնարկելով, իթթիհադը ձգտում էր եվրոպայի ուշադրությունը հրավիրել Աբդուլ Համիդի՝ որպես երդվյալ ջարդարարի վրա և այդպիսով հիմնավորելու նրան գահընկեց անելու անհրաժեշտությունը (տե՛ս Հ. Թ ե ր զ յ ա ն. Կիլիկիո ադետը, Կ. Պոլիս, 1912, էջ 806):*

[26] *«Արևելյան մամուլ», 1909, -23, էջ 530:*

[27] *«Ազատամարտ», 1909, 25 հուլիսի:*

էր տպագրում կուսակցության կողմից Կիլիկիա ուղարկված բժշկական առաքելության գործունեության մասին, որի նպատակն էր Ադանայում, Տարսոնում, Մերսինում և Դյորթ Յոլում բժշկական օգնություն ցուցաբերել կարոտյալներին:

Այսուհանդերձ, «Ազատամարտը» գտնվում էր դաշնակցության որդեգրած քաղաքական ուղեգծից ծնվող հակասության առջև: Կուսակցությունն այս շրջանում համագործակցում էր երիտթուրքական կառավարողների հետ, որի ջարդարար գործողություններն անակնկալ եղան նրա համար, և որը դրանից հետո պետք է վճռեր, թե որքանով է նպատակահարմար շարունակել այդ համագործակցությունը: Հայտնի է նաև, որ դաշնակցությունը որոշեց չհրաժարվել իր քաղաքականությունից, հուսալով, որ Ադանան երիտթուրքերի մեջ գործող հետադեմ ուժերի սադրանքների արդյունքն է և կապ չունի անկեղծ թուրք սահմանադրական գործիչների հետ: «Չէ որ այդ կազմակերպությունը, – - հետագայում գրում էր Մ. Վարանդյանը, – ևս արյուն թափեր էր ազատության համար և կուզեր Թուրքիո խաղաղ բարգավաճումը սահմանադրական կարգերու մեջ: Կար կորիզ մը թուրք հեղափոխականներու շարքերում, անկեղծորեն ազատասեր և սահմանադրական... թեպետ և շրջապատված, տարաբախտաբար, ամեն տեսակ կասկածելի տարրերով»[28]: Նույն հեղինակի խոսքերով ասած՝ կուսակցությունը սիրտը պետք է կարծրացներ «Կիլիկիո սարսափներուն ու կառավարության նենգություններուն առջև» և շարունակեր համագործակցությունը՝ ձևացնելով «լավ դիմախաղ՝ վատ խաղի մեջ»[29]: Դաշնակցության այս ռազմավարությանը դժվար է միանշանակ գնահատական տալը, ժամանակաշրջանը պահանջում է խոր և բազմակողմանի վերլուծություն, սակայն և պետք է ասել, որ այդպիսի համագործակցության շարունակությունը զուրկ էր ապագայի համար որևէ հեռանկարից: Համենայն դեպս, այստեղ ուշագրավը «Ազատամարտի» մյուս ուղեգիծն է. չխզելով կապերը երիտթուրքերի հետ, դաշնակցությունը չէր կարող այրել կառավարող կուսակցության հետ իրեն միացնող բոլոր կամուրջները, հարկավոր էր ինչ-որ կերպ հիմնավորել նշված կապը: Եվ թերթին ոչինչ չի մնում անելու, քան վերադառնալու ջարդերը հին ռեժիմի կողմնակիցներին վերագրելու նախնական վարկածին, դրան միացնելով երիտթուրքական հետադիմությանն ուղղած իր քննադատությունը: «Սահմանադրության ղեկը մնաց հին ռեժիմի ստեղծած անսահմանադիր ձեռքերու մեջ. պետական գործի ղեկավարությունը մենաշնորհին եղավ այնպիսիներու, որոնք բացառիկ շնորհքն ունեին իրենց անձը փառաբանել կամ իրենց փոքրիկ կիրքերը սիրաշահել»[30]: Կուսակցությունը, սակայն, խնդիրը չէր փակում այսպիսի ընդհանուր բնութագրումներով: Անհրաժեշտ էր ցույց տալ, որ դաշնակցությունը սահմանազատվում է երիտթուրքական հետադիմությունից: Այս իմաստով էր կուսակցության Կ.Պոլսի պատասխանատու մարմինը դիմում (1909 թ. հունիսի 26-ին) երիտթուրքական կուսակցության Սալոնիկի կենտրոնին: Այստեղ բողոք է հայտնվում իթթիհատական, Վիեննայի ռազմական կցորդ Հագգը բեյի դեմ, որը Ադանայի աղետի սկզբնապատճառն

---

[28] *Մ. Վ ա ր ա ն դ յ ա ն. ՀՅ դաշնակցության պատմություն, Երևան, 1992, էջ 435:*

[29] *Նույն տեղում:*

[30] *«Ազատամարտ», 1909, 30 հունիսի:*

էր համարել հայկական կոմիտեները: Դաշնակցության կոմիտեն առաջարկում էր պարզաբանել բեյի հայտարարությունը: Սալոնիկի երիտթուրքերը պահպանեցին անդրդվելիությունը, նրանց պատասխան հեռագրում նշվում էր, որ Հագգը բեյի հայտարարությունը չի համապատասխանում իթթիհադի ուղղությանն ու նպատակին և չի կարող ազդել «երկու կուսակցությանց միջև հաստատված հարաբերությանց և համաձայնության վրա»[31]:

Խնդրին խորաթափանց գնահատականով մոտեցավ Բ. Քեչյանը «Բյուզանդիոնում», որը Ադանայի ջարդի մեջ նկատում էր ոչ միայն երիտթուրքերի կազմակերպչական դերը, այլև նրանց կողմից Աբդուլ Համիդի ջարդարարական քաղաքականության հետագա ընդարձակման մռայլ հեռանկարը: Համենայն դեպս, երիտթուրքերի դեմ նրա առարկություններն ազատ են կուսակցական նախասիրություններով թելադրվող սահմանափակումներից. «Գալով Էբյուզիա Թևֆիք պեյի այն առարկության, թե հայերը ջարդողն Ապտյուլ Համիտ էր և ոչ իսլամ տարրը, կպատասխանենք, թե այս փաստը չափազանց հեղհեղվելով՝ ալ ձանձրալի կը դառնա: «Վուր ապալըյա (խփի՛ր ընկածին – Ա. Խ.), ամեն մեղք Ապտյուլ Համիտի վրա բեռցընելով կը վախնանք, որ իրենք զիրենք կը խաբեն... կամ մեզ ալ խաբել կը փորձեն»: Եվ ապա՝ «Համիտ իր ցեղին ներկայացուցիչն էր և անոր վարիչը: Իր եղեռնական ծրագիրներ նպաստավոր գետինի մը վրա մշակվեցան և իր ցանած դիվային սերմերը ծաղկեցան պարարտ հողի վրա»[32]:

Կ.Պոլսի հայ մամուլում ջարդերի վերաբերյալ լրատվության մեջ առանձնանում է հայերի ինքնապաշտպանական կռիվների թեման: «Բյուզանդիոնը», «Ազատամարտը», «Հայրենիքը», «Արևելքը» և այլ թերթեր անդրադարձան Չոք Մարզվանի, Հաճընի, Հասանբեկ գյուղի և այլ վայրերի ինքնապաշտպանական մարտերին: Մամուլը հիմնավորում էր նրանց ինքնապաշտպանության իրավունքը, նշելով, որ հայերի՝ իրենց պատվի և կյանքի ապահովության համար մղած հերոսական դիմադրությունն է առիթ տվել ջարդարարներին՝ նրանց մեղադրելու ապստամբական մտադրությունների ու գործողությունների մեջ: «Բյուզանդիոնի» խմբագիր Բ. Քեչյանը ի ցույց էր դնում «Թասվիր-ի էֆքյար» թերթի խմբագիր Էբյուզիա Թևֆիկի ճամարտակությունները հայերի «հավասարապես» մեղավոր լինելու հարցում, նշելով, որ թուրք խուժանին հայերը կարող էին դիմադրել միայն զինված ինքնապաշտպանության միջոցով[33]: «Մանզումեի էֆքյարի» մի հոդվածում վերարտադրվում են Չոք Մարզվան ապաստանած Նաջարլու գյուղի հայերի 13-օրյա տոկուն դիմադրությունը բազմապատիկ չափերով թվաշատ թուրքերին, գյուղը լքելը և ծանր կորուստներով Չոք Մարզվան հասնելը[34]:

---

[31] *Նույն տեղում, 1 հուլիսի: Այս, ինչպես և մյուս դեպքերում Սալոնիկի երիտթուրքերը բացահայտորեն ստում էին. ավելին, հայտնի է իթթիհադական այդ կենտրոնի գաղտնի հրահանգը զորքին՝ կոտորածի պակասը լրացնելու՝ մինչև վերջ հայերին կոտորելու վերաբերյալ (տե՛ս Ջ. Կ ի ր ա կ ո ս յ ա ն. Երիտթուրքերը պատմության դատարանի առաջ, հ. 1, Երևան, 1982, էջ 267):*

[32] *«Բյուզանդիոն» , 1909, 3 հունիսի:*

[33] *Նույն տեղում, 6 հուլիսի:*

[34] *«Մանզումեի էֆքյար», 1909, 27 մայիսի:*

Կ.Պոլսի և Զմյուռնիայի հայ մամուլը քաջատեղյակ էր Ադանայի աղետի ոչ միայն մանրամասներին, այդ գործում երիտթուրքական կազմակերպիչների գործողություններին, այլև այդ աղետի մեծ չափերին: Մամուլի տվյալները տատանվում են 20–40 հազար զոհերի սահմաններում: Ադանայի առաջնորդարանի քարտուղար Գր. Փափազյանի տվյալներով զոհված հայերի քանակը կազմում է ոչ պակաս, քան 40 հազար մարդ: Ժամանակի հայ մամուլում տիրապետող է դառնում միայն Ադանայում 20, իսկ շրջակայքի հետ միասին՝ 30–40 հազարի հասնող զոհերի թվաքանակը[35]*:*

Ադանայի 1909 թ. ապրիլյան կոտորածի հեղինակները մնացին անպատիժ՝ իրենց եղեռնագործությունը ստահոդ քարոզչության միջոցով դարձնելով հիմք՝ թուրքերին և քրդերին «ապստամբ» հայերի դեմ գրգռելու համար: Ադանայից հետո ևս քաղաքակիրթ երկրները մնացին նույն անտարբեր ու անվրդով հայեցողները հայության աղետին, ինչպիսին նրանց ռազմանավերն էին կիլիկյան նավահանգիստներում, որտեղից քիչ այն կողմ երիտթուրքերն իրականացնում էին իրենց նախճիրն անպաշտպան հայ ազգաբնակչության նկատմամբ: Երկրի ներսում ազգայնական համաճարակի անկասելի տարածումը, արտաքին աշխարհի լռության հանցագործությունը և սեփական անպատժելիության գիտակցությունը պետք է սնեին ու ծնեին երիտթուրքերի հրեշավոր երևակայությունն ու ծրագիրը՝ ձեռնամուխ լինել բնաջնջելու ողջ արևմտահայությանը՝ այս անգամ ամբողջ Օսմանյան կայսրության սահմաններում: Ադանան մի շատ ավելի մեծ արհավիրքի տեղային նախօրինակն էր, երիտթուրքերի ձեռքերի ազատությունը հաստատող վերջին անպատիժ փորձաքննությունը, որին հետևելու էր 1915 թ. սանձազերծված ցեղասպանությունը:

Ադանայի կոտորածը խոր հետք թողեց արևմտահայերի հասարակական գիտակցության վրա, ձերբազատեց նրա մի ստվար մասին երիտթուրքական ազատական նկարագրի մասին ունեցած պատրանքներից: Ադանայից հետո ձևավորվում էր հանրային կարծիք երիտթուրքերից սպասվելիք առավել մեծածավալ գործողությունների մասին, որը կործանարար պետք է լիներ հայության համար, կարծիք, որ Ադանան այդ ամենի նախերգանքն է: Դժբախտաբար, այս ամենը մնաց իբրև հեռավոր ու վերացական մի վտանգի կանխազգացում և քաղաքական կուսակցությունների, ազգի ներքին պառակտումների ու ներհակության պայմաններում քիչ բան արվեց մոտալուտ աղետին պատրաստ գտնվելու համար:

[35] *«Բյուզանդիոն», 1909, 29 մայիսի:*

ОСВЕЩЕНИЕ АДАНСКОЙ РЕЗНИ 1909 Г. В ЗАПАДНОАРМЯНСКОЙ ПЕЧАТИ

АЛЬБЕРТ ХАРАТЯН

Р е з ю м е

Организовав Аданскую резню (апрель 1909 г.), младотурецкое правительство, с целью сокрытия совершенного ими злодеяния, переложило вину на представителей администрации Абдул Гамида, а впоследствии – на ни в чем не повинное армянское население, подвергнутое погромам. Самооборону армян в окрестностях Аданы, направленную против турецких башибузуков и регулярной армии, младотурецкое правосудие, согласно материалам армянской периодики, квалифицировало как предательство и восстание против турок. События 1909 г. являли собой не что иное, как тотальный террор со стороны иттихада в отношении армянского народа – массовые погромы армян, осуществление которых должно было стать подготовкой к геноциду 1915 г.

THE ELUCIDATION OF THE 1909 ADANA MASSACRE IN WEST ARMENIAN PRESS

ALBERT KHARATYAN

S u m m a r y

With the purpose of concealing the organization of the crimes committed by the government of the Young Turks regarding the organization of the Adana massacre (April, 1909), the Young Turks lay the guilt of the crimes on the representatives of Abdul Hamid administration and the consequences – on the innocent Armenian population subjected to massacres. The Young Turkish justice, according to the materials of Armenian periodicals, qualified the self-defence of Armenians against the Turkish desperado and regular army in the suburbs of Adana as a treachery and revolt against the Turks. The events of 1909 – mass pogroms of Armenians were nothing but total terrorism against the Armenian people by Ittihad, the realization of which had to become preparation for the Genocide of 1915.